Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մայիսի 11-ի N 566 - Ա որոշման

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ներկա վիճակը 5

2. Ներդրումային ծրագրի նպատակը և ընդհանուր նկարագիրը 8

3. Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագրությունը 9

4. Ծրագրի մանրամասն նկարագիրը 10

5. Ծրագիրն իրականացնող անձ (անձինք) 11

6. Բաղադրիչ 1. «Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնում 15

6.1. Ներկա վիճակը 15

6.2. «Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնման նպատակը և հակիրճ նկարագրությունը 15

6.3. Մարտավարական խնդիրները 16

6.4. Մանրամասն նկարագիրը 16

6.5. Նախատեսվող գործողությունները 16

6.6. Իրականացման գործընթացը 18

6.7. Անհրաժեշտ տարածքը 19

6.8. Ակնկալվող արդյունքները 19

7. Բաղադրիչ 2. Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգումը 20

7.1. Ներկա վիճակը 20

7.2. Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգման նպատակը և հակիրճ նկարագրությունը 23

7.3. Մարտավարական խնդիրները 23

7.4. Մանրամասն նկարագիրը 23

7.5. Նախատեսվող գործողությունները 24

7.6. Իրականացման գործընթացը 28

7.7. Անհրաժեշտ տարածքը 29

7.8. Ակնկալվող արդյունքները 31

8. Բաղադրիչ 3. Քաղաքային զբոսայգու վերակառուցումը 32

8.1. Ներկա վիճակը 32

8.2. Քաղաքային զբոսայգու մի հատվածի բարեկարգման նպատակ և հակիրճ նկարագրությունը 34

8.3. Մարտավարական խնդիրները 34

8.4. Մանրամասն նկարագիրը 34

8.5. Նախատեսվող գործողությունները 35
8.6. Իրականացման գործընթացը 38
8.7. Անհրաժեշտ տարածքը 38
8.8. Ակնկալվող արդյունքները 39
9. Բաղադրիչ 4. Քաղաքային մարզադաշտի վերակառուցումը 40
9.1. Ներկա վիճակը 40
9.2. Մարզադաշտի բարեկարգման նպատակը և հակիրճ նկարագրությունը 41
9.3. Մարտավարական խնդիրները 41
9.4. Մանրամասն նկարագիրը 42
9.5. Նախատեսվող գործողությունները 42
9.6. Իրականացման գործընթացը 45
9.7. Անհրաժեշտ տարածքը 46
9.8. Ակնկալվող արդյունքները 46
10. Ծրագրի հիմնական ռիսկերը և դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները 48
11. Ծրագրի սոցիալ-տնտեսական նշանակությունը և ազդեցությունը տարածքի զարգացման վրա 51
12. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 53

1. Ներկա վիճակը

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային բնակավայրը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի հարավարևմտյան մասում՝ Դիլիջանի Ազգային պարկի տարածքում, 1,256 մ միջին բացարձակ բարձրության վրա:

2. Աշխարհագրական դիրքով և բնակլիմայական պայմաններով Դիլիջանի համայնքը հայտնի և չափազանց նպաստավոր է հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և տուրիզմի զարգացման համար: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ վերջին տարիներին Դիլիջանի համայնքում պետական և մասնավոր հատվածի կողմից իրականացվել են մեծածավալ ներդրումներ, մասնավորապես՝

1) «ՌՎՎԶ» հիմնադրամը և մի շարք հեղինակավոր անձինք, իրականացնելով ներդրումներ (ծրագրի արժեքն ավելի քան 196 մլն դոլար), հիմնադրել են Դիլիջանի միջազգային դպրոցը, որի հիմնական նպատակը Հայաստանը համաշխարհային կարգի կրթական կենտրոն դարձնելն է.

2) ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ 2013 թվականի հունվարից իր գործունեությունն է սկսել ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը, որը համարվում է ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներով հագեցված կրթական հետազոտական համալիր.

3) «Այբ» հիմնադրամի և ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցության արդյունքում 2013 թ. Դիլիջանի կենտրոնական դպրոցը միացավ «Այբ» դպրոցների ընտանիքին.

4) 2017 թվականից իր գործունեությունն է իրականացնում Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը.

5) ՀՀ Տավուշի մարզում, մասնավորապես, Դիլիջանի քաղաքային բնակավայրի տարբեր բնագավառներում մեծածավալ ներդրումներ և համայնքի զարգացմանը նպաստող միջոցառումներ են նախատեսվում իրականացնել միջազգային կառույցների

(ADB, EBRD, GIZ և այլն) կողմից, որոնց հեռանկարային նպատակը Դիլիջանում տնտեսական աճը և ենթակառուցվածքների զարգացումը խրախուսելն է:

3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կառավարության կողմից որդեգրված քաղաքականության շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց և 2015 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտավ «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք): Օրենքի ընդունմամբ ստեղծվեցին Դիլիջանում ներդրումային գրավչության բարձրացման օրենսդրական հիմքեր:

4. Օրենքով նախանշված զարգացման ուղղությունների համար կարևոր պայման է հանդիսանում նաև քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համապատասխանեցումն ստեղծված նոր միջավայրին, ինչի շրջանակներում Դիլիջանի համայնքի և «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի կողմից նախաձեռնվել և իրականացվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում փոփոխությունների կատարման և Աղստև գետին զուգահեռ միջանցքի, ընդգրկելով նորակառույց միջազգային դպրոցի տարածքը, Գետափնյա և Կալինինի փողոցների, ինչպես նաև քաղաքային բնակավայրի կենտրոնական մասի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքները: Աշխատանքներն ավարտվել են և ներկայացվել Դիլիջանի համայնքապետարան հաստատման հետագա ընթացքն ապահովելու համար:

5. Հարկ է նշել, որ գոտիավորման նախագծի մշակման շրջանակներում իրականացվել են գոտիավորման տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների գույքագրման, պահպանման և վերակառուցման միջոցառումներ, ինչպես նաև նախատեսվում են վերականգնել Դիլիջանում պատմականորեն ձևավորված ճարտարապետության տարրերը և դրանց կիրառումն ապագա քաղաքաշինական նախագծերում: Գոտիավորման նախագիծն ունի առանցքային դեր քաղաքային բնակավայրի համապարփակ զարգացման, քաղաքաշինական սկզբունքների ու մոտեցումների արդյունավետ ներդրման ու պահպանման համատեքստում, քանի որ դրա կիրառումն էական խթան

կհանդիսանա թե՛ պատմական հուշարձանների պահպանության, վերականգնման և թե՛ զբոսաշրջության զարգացման գործում:

Դիլիջանի համայնքում իրականացվող գոտիավորման նախագծի տարածքը



6. Համայնքում իրականացվող մեծածավալ ներդրումային ծրագրերի համա-տեքստում և տեղի բնակչության հոգևոր կարիքները բավարարելու նպատակով Դիլիջանի Դեվելոփմենթ հիմնադրամի հիմնադիրների նախաձեռնությամբ մեկնարկել է Դիլիջանում եկեղեցու կառուցման գործընթացը:

7. Եկեղեցու նախագծի էսքիզային տարբերակը հաստատվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական խորհրդի 2015 թ. մայիսի 14-ի նիստում:

Դիլիջանի համայնքում նախատեսվող եկեղեցու նախագիծը

8. Եկեղեցու կառուցման նախագծի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներդնել առնվազն 5 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:

Շինարարությունն սկսվել է 2016 թ. գարնանը:

2. Ներդրումային ծրագրի նպատակը և ընդհանուր նկարագիրը

9. Հիմնադրամը կարևորում է Դիլիջանի համայնքի ու հարակից տարածքների համահունչ և համապարփակ զարգացումը: Դիլիջանի համայնքի զարգացման տեսլականի արդյունավետ իրագործման անհրաժեշտությունից ելնելով՝ հիմնադրամն ստանձնել է ծրագրի իրագործման համակարգող օղակի դերը:

10. Դիլիջանի համայնքի զարգացման տեսլականի արդյունավետ իրականացման նպատակով հիմնադրամը միաժամանակ նախաձեռնել է մի քանի ներդրումային նախագծեր, որոնք կիրականացվեն առանձին փուլերով: Նշված մոտեցումը պայմանավորված է Դիլիջանում ներկայումս առկա մի շարք հիմնախնդիրների համակարգային լուծում տալու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝

1) Դիլիջանը, լինելով Երևան-Թբիլիսի միջպետական, Երևան-Իջևան և Երևան-Վանաձոր միջհամայնքային ճանապարհների խաչմերուկում, արդյունավետ կերպով չի օգտագործում համայնքի զարգացման պոտենցիալը.

2) գտնվելով բարենպաստ աշխարհագրական և բնակլիմայական պայմաններով օժտված միջավայրում՝ այնուամենայնիվ թերզարգացած են զբոսաշրջային ենթակառուցվածքները.

3) Դիլիջանը, պատմականորեն լինելով առողջարանային քաղաք, ներկայումս կորցրել է իր գրավչությունը.

4) բացակայում են հանգստի, ժամանցի, սպորտային կյանքի կազմակերպման համար բավարար ենթակառուցվածքները.

5) բացակայում են քաղաքաշինական արդի կանոնները և չափանիշերը:

3. Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագրությունը

11. Դիլիջանի առողջարանային կենտրոնի ստեղծման և հասարակական ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում հիմնադրամը նախաձեռնել է քաղաքի Գետափնյա հատվածում իրականացնել մի քանի երկարաժամկետ ներդրումային նախագծեր, որոնց նպատակն է՝

1) համայնքի բնակիչների և այցելուների հանգստի ու ժամանցի կազմակերպման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը.

2) զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը.

3) քաղաքաշինական նոր տեխնոլոգիաների և մոտեցումների խրախուսումն ու կիրառումը.

4) բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և նախագծերի իրականացման արդյունքում ՓՄՁ ոլորտի զարգացումը.

5) միջազգային չափանիշերին համապատասխան առողջարանային կենտրոնի հիմնումը, բժշկական զբոսաշրջության խթանումը:

12. Ներդրումային ծրագրի իրականացման ռազմավարական խնդիրներն են՝

1) համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների հանգստի, ժամանցի և սպորտային կյանքի կազմակերպման ենթակառուցվածքների ձևավորումը՝ կիրառելով միջազգային առաջավոր փորձն ու մոտեցումները.

2) զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը.

3) միջազգային չափանիշերին համապատասխան բժշկական ծառայությունների մատուցումը, տարածաշրջանում նորարարական առողջապահական կենտրոնի հիմնումը.

4) «մաքուր քաղաք» և «կանաչ քաղաք» սկզբունքները ներդնելը և կիրառելը.

5) համայնքում տնտեսական ակտիվությունը խթանելը՝ հանգստի և ժամանցի կազմակերպման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման միջոցով.

6) քաղաքաշինության բնագավառում նոր սկզբունքներ և կանոններ կիրառելը.

7) իրականացվող մեծածավալ ներդրումների միջոցով Դիլիջանի համայնքի ներդրումային գրավչությունը բարձրացնելը.

8) համալիր ներդրումների արդյունքում համայնքի բնակիչների և բիզնեսի ներկայացուցիչների տնտեսական ակտիվությունը խթանելը:

Ծրագրի մարտավարական խնդիրները ներկայացված են առանձին բաղադրիչների շրջանակներում:

4. Ծրագրի մանրամասն նկարագիրը

13. Գնահատելով վերջին տարիներին Դիլիջանի համայնքում կատարված ներդրումների կարևորությունը և դրանց շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից որոշում է ընդունվել մեկնարկել Դիլիջանի առողջարանային կենտրոնի ստեղծման և հասարակական ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը:

14. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել այնպիսի նախագծեր, որոնք էական ազդեցություն կունենան ինչպես Հայաստանի ճանաչելիության, այնպես էլ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի, զբոսաշրջային հոսքերի, բնակչության ու համայնքի այցելուների հանգստի ու ժամանցի կազմակերպման վրա: Կարևոր է փաստել, որ ծրագրի բաղադրիչներից յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին ներդրումային նախագիծ, և սույն ծրագրով տրվում է այդ ներդրումային նախագծերի մեկնարկը: Ավելին՝ նախատեսվում է հիմք ստեղծել ապագայում նախատեսվող ներդրումային նախագծերի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնել «Զաում Դիլիջան» առողջարանային կենտրոնը, ձևափոխել քաղաքային լիճը և բարեկարգել լճի հարակից տարածքը, վերակառուցել քաղաքային մարզադաշտը և դրան հարակից քաղաքային զբոսայգու հատվածը:

15. Ստորև ներկայացված են ծրագրի չորս բաղադրիչները, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացված է առանձին բաժիններով՝

1) «Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնում.

2) քաղաքային լճի հարակից տարածքի բարեկարգում.
3) քաղաքային զբոսայգու բարեկարգում.
4) քաղաքային մարզադաշտի վերակառուցում:

5. Ծրագիրն իրականացնող անձ (անձինք)

16. Դիլիջանի առողջարանային կենտրոնի ստեղծման և հասարակական ենթակառուցվածքների զարգացման ծրագրում ներգրավված կառույցներն են՝

1) **«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ (IDeA)** (այսուհետ՝ IDeA բարեգործական հիմնադրամ)**,** որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան 6:

IDeA բարեգործական հիմնադրամը հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է երկարաժամկետ ծրագրերի իրականացման նպատակով, որոնք ազդեցություն կգործեն Հայաստանի ապագայի վրա և կօգնեն նրան գոյատևման մոդելից անցնել բարգավաճման մոդելի և այլ հանրօգուտ նպատակներ:

Ծրագրի իրականացման շրջանակներում IDeA բարեգործական հիմնադրամը հանգանակելու և ներդնելու է ֆինանսական միջոցներ, ինչպես նաև իրականացնելու կամ կազմակերպելու է հաշվապահական հաշվառման, իրավական, մարքեթինգային և հասարակայնության հետ կապերի աջակցություն, տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (feasibility study), էսքիզային, ճարտարապետական, նախահաշվային, ինժենեռական նախագծերի մշակում, լանդշաֆտի դիզայն և այլն: Հիմնադրամը նախատեսում է իրականացնել նաև աշխատանքներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական կառույցների, ներդրողների և դոնորների հետ, որոնք մասնակցություն կունենան ծրագրի առանձին բաղադրիչների իրագործման գործում: Նշված աշխատանքները IDeA բարեգործական հիմնադրամը նվիրաբերում կամ օտարում է, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների:

Հիմնադրամի հիմնադիրներն են հանդիսանում՝

ա. Ռուբեն Կառլենի Վարդանյանը (ծնվ.՝ 25.05.1968 թ., անձնագրի համար՝ 53 0284246, տրված՝ Ռուսաստանի ԱԳՆ 07701-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 29.05.2012 թ. գրանցման հասցեն՝ ՌԴ, քաղ. Մոսկվա, Ռոմանով նրբ., տուն 5, բն. 21),

բ. Վերոնիկա Ֆելիքսի Զոնաբենդ (ծնվ.՝ 08.02.1967 թ., անձնագրի համար՝ 72 6327581, տրված՝ ՖՄՇ 07701-ի կողմից, տալու ամսաթիվը՝ 03.10.2013 թ. գրանցման հասցեն՝ ՌԴ, քաղ. Մոսկվա, Ռոմանով նրբ., տուն 5, բն. 21).

2) **Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամը** (այսուհետ՝ հիմնադրամ), որը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի նպատակը ներդրումային գրավչության բարձրացման և երկարաժամկետ ծրագրերի իրականացման միջոցով սոցիալ-տնտեսական և զարգացումն ապահովելը, ինչպես նաև կրթության և զբոսաշրջության զարգացմանը Դիլիջանի համայնքում և հարակից տարածքներում նպաստելն է:

Հիմնադրամի հիմնադիրներն են հանդիսանում՝

ա. ՌՎՎԶ հիմնադրամը,

բ. «Ադիբեկյան Ֆեմիլի Ֆաունդեյշն ֆոր ըդվենսմենթ» ոչ առևտրային կազմակերպությունը:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Դիլիջան, 3903, Գետափնյա փող., 7:

Ծրագրի իրականացման համար, բացի ֆինանսական մասնակցությունից, հիմնադրամը նախատեսում է իրականացնել աշխատանքներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական կառույցների, ներդրողների և դոնորների հետ, որոնք մասնակցություն կունենան ծրագրի առանձին բաղադրիչների իրագործման գործում,

3) **ԴԻՍ Փրոփերթիս բարեգործական հիմնադրամ,** որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Դիլիջան, 3903, Գետափնյա փող., 7:

ԴԻՍ Փրոփերթիս բարեգործական հիմնադրամը ծրագրի իրականացման շրջանակում նվիրաբերում է իրեն սեփականության, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով պատկանող գույքը և (կամ) հանգանակում դրամական միջոցներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գույքի նվիրաբերության մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների.

4) **«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ**, որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0019, Բաղրամյան փող., 6:

«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի սեփականության, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով պատկանող գույքը, ինչպես նաև ֆինանսական միջոցները հանգանակվում և ներդրվում են ծրագրի իրականացման համար, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների.

5) «Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ, որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Դիլիջան, Գետափնյա փող., 3:

«Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ-ի սեփականության, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով պատկանող գույքը, ինչպես նաև ֆինանսական միջոցները հանգանակվում և ներդրվում են ծրագրի իրականացման համար, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների.

6) «Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ, որի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան փող., 2/2:

Ծրագրի իրականացման շրջանակներում «Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ն իրականացնելու և (կամ) կազմակերպելու է շինարարության ընթացքում անհրաժեշտ վերահսկողական ֆունկցիաները, ինչպես նաև իրականացնում է շինարարական գործընթացի կառավարման գործընթացը.

7) **«Թի Էֆ Արքիթեքթս» ՍՊԸ,** որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան փող., 6:

Ծրագրի իրականացման շրջանակներում **«Թի Էֆ Արքիթեքթս» ՍՊԸ-ն** ծրագրի շրջանակներում իրականացնելու կամ կազմակերպելու է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (feasibility study), էսքիզային, ճարտարապետական, նախահաշվային,

ինժեներական նախագծերի մշակում, լանդշաֆտի դիզայն և այլն: Նշված աշխատանքները **«Թի էֆ Արքիթեքթս» ՍՊԸ-ն** նվիրաբերում կամ օտարում է, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների.

8) **«Քեմփ Վենչուրս» ՓԲԸ,** որի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան փող., 2/2:

Ծրագրի իրականացման շրջանակներում «Քեմփ Վենչուրս» ՓԲԸ-ն սեփականության, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով պատկանող գույքը նվիրաբերում կամ օտարում, ինչպես նաև ֆինանսական միջոցները հանգանակում և ներդնում է ծրագրի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում «Քեմփ Վենչուրս» ՓԲԸ-ն իրականացնելու կամ կազմակերպելու է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (feasibility study), էսքիզային, ճարտարապետական, նախահաշվային, ինժենեռական նախագծերի մշակում, լանդշաֆտի դիզայն և այլն: Նշված աշխատանքները «Քեմփ Վենչուրս» ՓԲԸ-ն նվիրաբերում կամ օտարում է, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացվում է ըստ բաղադրիչների:

17. Ստորև ներկայացված են ծրագրի բաղադրիչներն ըստ իրականացվող ներդրումների, ժամկետների, ինչպես նաև հողամասի մակերեսի:

NN ը/կ	**Բաղադրիչը**	**Հողամասի մակերեսը (քառ. մ)**	**Ձեռք բերված գույքի արժեքը (դրամ, հազ.)**	**Ներդրվող գումարը (առնվազն, դրամ, հազ.)**	**Իրականացման ժամկետը (ամիս)**
1.	**«Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնում**	առնվազն 59,100	838,000	14,000,000	60
2.	**Քաղաքային լճի և հարակից տարածքների բարեկարգում**	առնվազն 46,000	499,522	670,000	60
3.	**Քաղաքային զբոսայգու բարեկարգում**	առնվազն 64,000, որից 35,000 քառ. մետրն անհրաժեշտ է վարձակալել համայնքից	0	145,000	60

4.	**Դիլիջանի մարզադաշտի վերակառուցում**	19,440	0	315,000	60

6. Բաղադրիչ 1. «Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնում

6.1. Ներկա վիճակը

18. Որպես առողջարանային կենտրոն՝ Դիլիջանն սկսել է զարգանալ 19-րդ դարի վերջերից: Հանրապետությունում առաջին առողջարանը՝ հակատուբերկուլյոզային առողջարանը բացվել է Դիլիջանում 1921 թվականին: Որպես առողջարան քաղաքին 1958 թվականին տրվել է հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ:

19. Ներկայումս քաղաքում գործում են շուրջ 25 առողջարաններ, պանսիոնատներ, հյուրատներ, այդ թվում՝ «Լեռնային Հայաստան» և «Դիլիջան» առողջարանները, մանկական հակատուբերկուլյոզային առողջարանը, իսկ 2013 թ.-ից գործում է մարզային նշանակության առաջնակարգ «Տավուշ» ախտորոշիչ կենտրոնը:

6.2. «Զաում Դիլիջան» կենտրոնի հիմնման նպատակը և հակիրճ նկարագրությունը

20. IDeA բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ռազմավարական ծրագիր է Դիլիջան առողջապահական կենտրոնի հիմնումը, որն իր դրական ազդեցությունը կունենա Հայաստանը որպես տարածաշրջանային առողջապահական կենտրոն ձևավորելու գործում: Համաձայն Հայաստան 2020 և 2030 նախաձեռ-նությունների՝ առողջապահությունը հանդիսանում է թիրախային ոլորտ, որը նախանշվել է որպես Հայաստանի զարգացման կարևորագույն ոլորտներից մեկը, ինչն էական ազդեցություն կունենա ՀՆԱ-ի վրա: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն փաստը, որ Դիլիջանը թե՛ պատմականորեն, և թե՛ իր աշխարհագրական դիրքով գտնվում է բարենպաստ միջավայրում, IDeA հիմնադրամը ձգտում է վերածել Դիլիջանը տարածա-շրջանային առողջապահական հանգույցի՝ ներգրավելու Ռուսաստանի, Եվրոպայի ու արաբական երկրների զբոսաշրջիկներին, ովքեր ճամփորդում են առողջապահական ծառայություններից օգտվելու նպատակով:

21. Առողջապահական կենտրոնի ծրագրի շրջանակներում IDeA բարեգործական հիմնադրամը ցանկանում է ստեղծել «Զաում Դիլիջան» կենտրոնը, որը նպատակ ունի

տրամադրել բարձրակարգ, ինտեգրված հակատարիքային և վերականգնողական բժշկական ծառայություններ: Դիլիջանում կենտրոնը կտրամադրի կանխարգելիչ և վերականգնողական բժշկական ծառայություններ:

6.3. Մարտավարական խնդիրները

22. Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը՝
    1) նախագծերի համատեղելիություն Հայաստանի օրենսդրության հետ.
    2) գործառնական մոդել.
    3) ֆինանսական կայունություն:
23. Ֆինանսավորման աղբյուրները՝
    1) ներդրողներ կամ դոնորներ.
    2) միջազգային ֆինանսական կառույցներ:
24. Տարածքի պլանավորում՝ հաշվի առնելով Չաում բրենդի ստանդարտները:

6.4. Մանրամասն նկարագիրը

25. Ներկայումս նախագիծը տեխնիկատնտեսական ուսումնասիրության փուլում է, և ինչի համար էլ մարտավարական խնդիրները դեռևս սկզբնական փուլում են:

26. Կենտրոնի շինարարությունը պետք է իրականացվի Չաումի բրենդի ստանդարտներին համապատասխան՝ նորարար դիզայնով և տարբեր էներգիաներ ներկայացնող գույներով:

6.5. Նախատեսվող գործողությունները

27. Ստորև ներկայացվում են բոլոր անհրաժեշտ նվազագույն գործողությունները, որոնք անհրաժեշտ է իրականացնել մինչև «Չաում Դիլիջան» կենտրոնի շահագործումը: Հաշվի առնելով Դիլիջանում առողջարանային նորարարական կենտրոնի ստեղծման և տարածաշրջանում եզակի նախագծի իրականացման կարևորությունը՝ IDeA բարեգործական հիմնադրամը համապատասխան պայմանագրեր է կնքել CHAUM Medical Center և PHILIPS-ի հետ, որոնք միաժամանակ իրականացնում են տեխնիկատնտեսական

ուսումնասիրություններ, որտեղ CHAUM Medical Center-ն կենտրոնացած է Դիլիջանում նախագծվող կենտրոնի հետ կապված ուսումնասիրությանը, իսկ PHILIPS-ն իրականացնում է աշխարհում բժշկական տուրիզմի համար շուկայի ուսումնասիրությունը:

Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (CHAUM Medical Center)
Ընդհանուր միջավայրի և առողջապահական ենթակառուցվածքների ուսումնասիրություն
Տեղորոշման հետազոտություն
Դիլիջանի դաշտային հետազոտություն
Ծառայությունների և գնագոյացման մոդելավորում
Մարդկային ռեսուրսների մոդելավորում
Ֆինանսական մոդելավորում
Ամփոփ հաշվետվություն
Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (PHILIPS)
Գլոբալ գործող կոնցեպտների ուսումնասիրություն՝ ցանցի հետազոտության, փորձագետների հարցազրույցների և առևտրային հաշվետվությունների միջոցով
Բուժման ոլորտների ուսումնասիրություն
Պոտենցիալ թիրախային խմբի ուսումնասիրություն՝ առևտրային հաշվետվությունների, հիվանդների վիճակագրության, հիվանդների հարցազրույցների և փորձագետներին հարցազրույց անելու միջոցով
Հիվանդի վարքագծի և իր վրա ազդեցություն ունեցող գործոնների ուսումնասիրություն՝ խորացված հարցազրույցների միջոցով
Քանակական տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ կենտրոնանալով ծավալի վրա
Ճարտարապետական նախագծում և ինտերիերի դիզայն
Ճարտարապետական նախագծում
Հայեցակարգի ձևավորում և սխեմատիկ նախագծում
Շինարարություն և սարքավորումների ձեռքբերում
Գործառնությունների պլանավորում և նախնական գործարկում

Ծրագրի ապահովմանն մշակում՝ SS ինտեգրված բժշկական կառավարում և խելացի սարքեր
Հայաստանի հիմնական աշխատակազմի ուսուցում Կորեայում
Կորեայի անձնակազմի ժամանում և աշխատանքային ուսուցում տեղում
Ձեռնարկի պատրաստում
Լիարժեք գործարկում

6.6. Իրականացման գործընթացը

28. Ծրագրի իրականացման տևողությունը 60 ամիս է, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

NN ը/կ	**Միջոցառումը / փուլը**	**Պատասխանատուն**	**Ծանոթագրություն**
1.	Տվյալների վերլուծություն և հարցազրույցներ	- Philips IDeA բարեգործական հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր N.1678-020617, փուլ 1
2.	Քանակական ուսումնասիրություն և հիվանդների հոսքի կանխատեսում		խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր N.1678-020617, փուլ 2
3.	Նախագծի տնտեսական հիմնավորում		խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր N.1678-020617, փուլ 3
4.	Նախնական ուսումնասիրություն և գաղափարի նախագծում	CHAUM Medical Center IDeA բարեգործական հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, նոյեմբերի 6, 2017 փուլ 1-2
5.	Նախնական գործառնական նախագծում	CHAUM Medical Center IDeA բարեգործական հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	
6.	Ճարտարապետական նախագծում և ինտերիերի դիզայն	CHAUM Medical Center Թի էֆ ԱՐՔԻԹԵՔԹՍ ՍՊԸ, ընտրված ճարտարապետական նախագծման բյուրո	խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, նոյեմբերի 6, 2017 փուլ 3
7.	Շինարարություն և	IDeA բարեգործական	խորհրդատվական

	սարքավորումների ձեռքբերում	հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք, մրցույթով ընտրված շինարարական կազմակերպություն, սարքավորումների մատակարարներ	ծառայությունների մատուցման պայմանագիր, նոյեմբերի 6, 2017 փուլ 4
8.	Նախնական գործարկում	- CHAUM Medical Center IDeA բարեգործական հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, նոյեմբերի 6, 2017 փուլ 5
9.	Լիարժեք գործարկում		

6.7. Անհրաժեշտ տարածքը

29. «Չաում Դիլիջան» կենտրոնի տարածքը պետք է գտնվի Դիլիջանի քաղաքային բնակավայրում կամ Դիլիջանի համայնքում: Նախընտրելի տարածքը պետք է լինի 3-5 հեկտարը, որը կհատկացվի «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի, «Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ-ի կամ նախագծի այլ մասնակցի կողմից: Նախնական ընտրված տարածք՝

1) Դիլիջանի Գորկի 3/1 հասցեում գտնվող 6,365 քառ. մետր հողամաս, որը սեփականության իրավունքով պատկանում է «Դիլիջան Դվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ին.

2) Դիլիջանի Գորկի 3/3 հասցեում գտնվող 8,670 քառ. մետր հողամաս, որը սեփականության իրավունքով պատկանում է «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ին.

3) Դիլիջանի Գորկի 3/4 հասցեում գտնվող 44,065 քառ. մետր հողամաս, որը սեփականության իրավունքով պատկանում է «Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ-ին.

4) անհրաժեշտ ուսումնասիրություններն իրականացնելու արդյունքում անհրաժեշտություն կարող է առաջանալ ձեռք բերել վերը նշված տարածքներին հարակից այլ տարածքներ:

6.8. Ակնկալվող արդյունքները

30. Նախագծի իրականացման արդյունքում Հայաստանը կդառնա տարածաշրջանում նորարարական բժշկական ծառայություններ մատուցող կենտրոն, ինչի

արդյունքում կզարգանա բժշկական տուրիզմը՝ ապահովելով վճարունակ հաճախորդների հոսքը դեպի Հայաստան:

31. Կներդրվեն առողջապահության ոլորտում նորագույն ստանդարտներ, ինչպես նաև կձևավորվի բարձր որակավորում ունեցող անձնակազմ:

7. Բաղադրիչ 2. Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգումը

7.1. Ներկա վիճակը

32. Քաղաքային լիճը գտնվում է Դիլիջանի ավտոկայանին հարող բաժանարար խաչմերուկում, որտեղ հատվում են հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհները, ինչպես նաև քաղաքի հիմնական փողոցները: Հարկ է նշել, որ քաղաքի այդ հատվածով է անցնում Հայաստան-Վրաստան միջպետական մայրուղին, ինչպես նաև Դիլիջանն այլ քաղաքային և գյուղական բնակավայրերին կապող հիմնական ճանապարհները: Նշված հատվածը նաև հանդիսանում է այն կարևոր հանգույցներից մեկը, որով անցնում են զբոսաշրջային հոսքերը: Զբոսաշրջային ակտիվ ժամանակահատվածում քաղաքի այդ հատվածում՝ Միմինոյի արձանի հարևանությամբ, նկատվում է զբոսաշրջիկների հոսքերի ժամանակավոր կանգառ. այս վայրը զբոսաշրջիկների և այցելուների՝ քաղաքում շրջայցի մի մասն է:

Քարտեզ՝ քաղաքային լճի և հարակից տարածքների տեղադիրքի

33. Քաղաքային լիճը և վերջինիս հարակից տարածքը, գտնվելով անբարեկարգ վիճակում, համարվում են ոչ գրավիչ վայր՝ քաղաքի բնակչության և զբոսաշրջիկների ժամանցն ու հանգիստը կազմակերպելու համար, ինչի արդյունքում զբոսաշրջային ակտիվ ժամանակաշրջանում այստեղ չի նկատվում ակտիվություն:

34. Քաղաքային լճի և հարակից տարածքի ոչ մասնագիտական ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները՝

1) շահագործման 50 տարիների ընթացքում լճի հատակի և կողապատերի կոնստրուկցիաները երբևէ չեն նորոգվել, ավելին՝ հատակի և կողապատերի բետոնե կոնստրուկցիաները ճաքճքված և քայքայված են:

2) գետի ջրառի աղբյուրի փոփոխության հետևանքով լճի ջրի որակի խնդիրներ են առաջացել: Նախկինում լիճը լցվել է Աղստև գետի ջրով, սակայն հետագայում խողովակների խցանման հետևանքով ջրի մուտքն ապահովել են Հովաջուր գետից: Հովաջուր գետի աղտոտման մակարդակը լինելով ավելի բարձր, քան Աղստևինը՝ միջավայր է ձևավորում ջրային բույսերի և ջրիմուռների արագ բազմացման համար, ինչի արդյունքում լիճը շատ արագ՝ մոտ երկու շաբաթվա ընթացքում, ճահճանում է: Լճի

ճահճացմանը նպաստում է նաև ջրամատակարարման և ջրահեռացման ոչ ճիշտ համակարգը, ինչի արդյունքում լճի որոշ հատվածներում ջրի շրջանառություն գրեթե տեղի չի ունենում:

Նկար՝ լճի ներկայիս վիճակը

35. Լիճը շրջապատված է կանաչապատ գոտով, որը ներկայում չի խնամվում: Լճի շուրջը ձգվող ճեմուղիների ծածկը քայքայված է: Լճին հարակից Ծատուրյան փողոցն անբարեկարգ է՝ մեծ խոչընդոտներ ստեղծելով թե՛ հետիոտների, թե՛ ավտոմեքենաների երթևեկության համար, ուստի փողոցի այս հատվածը գրեթե չի օգտագործվում:

36. Լուսավորության համակարգը բավարար չէ տարածքում գիշերային ժամերին ապահով հանգիստ կազմակերպելու համար:

37. Նախորդ տարիների ընթացքում որոշ աշխատանքներ են տարվել լճի շրջակայքում: Մասնավորապես, ամրացվել է լճի կամուրջը, կատարվել է լճին հարող հատվածում գետի հենապատի մեկուսացում, ամրացվել են լճի վրայի հարթակները, ինչպես նաև կազմակերպվում է լճի շրջակայքի ամենօրյա մաքրություն:

7.2. Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգման նպատակը և հակիրճ նկարագրությունը

38. Բաղադրիչ նպատակը քաղաքային լճի հատվածում համայնքային կյանքի զարգացման և հանգստի կազմակերպման համար կարևորագույն հանգույցի ձևավորումը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումն է:

7.3. Մարտավարական խնդիրները

39. Քաղաքային լճի և շրջակայքի լանդշաֆտի էսթետիկ գեղեցկության և քաղաքի դարպասների ներկայանալի տեսքի ապահովում՝

1) կենսաբազմազանության պահպանություն.

2) լճի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի արդիականացում.

3) համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների տարբեր տարիքային խմբերի համար հանգստի և ժամանցի անցկացման, ինչպես նաև անվտանգ ճեմուղիների և հեծանվային ուղիների ձևավորում.

4) հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար մատչելի ենթակառուցվածքների ձևավորում:

7.4. Մանրամասն նկարագիրը

40. Սույն բաղադրիչի իրականացումն ուղղված է լճի տարածքի հանրային և հանգստի գոտիների վերականգնմանը, որը կազմում է առնվազն 46,000 քառ. մ տարածք:

7.5. Նախատեսվող գործողությունները

41. Կարևորելով քաղաքային լճի ճահճացման խնդրի լուծումը՝ բաղադրիչի իրականացման շրջանակներում նախատեսվում է կազմակերպել առնվազն հետևյալ միջոցառումները՝

Փուլ 1

42. Լիճը և լճին հարակից տարածքը զբաղեցնում է առնվազն 46,000 քառ. մետր մակերես: Տարածքը ժամանցի և հանգստի վայր կազմակերպելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

1) ծառերի գույքագրում, սանիտարական հատումներ և անհրաժեշտության դեպքում տարածքի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին համապատասխան նոր ծառերի տնկում.

2) լանդշաֆտի ձևավորում, կանաչապատում, նստարանների և աղբամանների տեղադրում.

3) անվտանգ ճեմուղիների, հեծանվային ուղիների ձևավորում և զարգացում.

4) հանրային միջոցառումների կազմակերպման համար ենթակառուցվածքների ձևավորում, վրանի տեղադրում, բացօթյա միջոցառումների կազմակերպման ենթա-կառուցվածքների ձևավորում.

5) լուսավորության և անվտանգության համակարգերի կատարելագործում.

6) տուրիստական ինֆորմացիոն կենտրոնի ստեղծում.

7) քաղաքային շուկայի (City Market) կազմակերպում, որի տոնավաճառների, սեզոնային առևտրի, ձեռագործ աշխատանքների առևտրի կազմակերպման համար նպատակը միջավայր ձևավորելն է.

8) վերգետնյա և ստորգետնյա ինժեներական ցանցերի հզորացում և անհրա-ժեշտության դեպքում տեղափոխություն:

Фпц 2

43. Տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն (feasibility study), քաղաքային լճի չափսերի փոփոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, ինչը նպատակ կհետապնդի աղտոտվածությունը նվազեցնելու եղանակների, ջրամատակարարման, ջրահեռացման և ֆիլտրացման համակարգերի պահանջվող հզորությունների, ջրի շրջանառության կառավարման վերաբերյալ եզրակացության ստացման:

44. Քաղաքային լճի տեխնիկատնտեսական ուսումնասիրության հիման վրա լճի նախագծի մշակում:

45. Հաստատված նախագծի շրջանակներում՝

1) մեծացնել լճի չափսերը, ձևավորել լճի հատակը և կողապատերը.

2) վերականգնել ջրառն Աղստև գետից՝ նախատեսելով ֆիլտրման համակարգեր և ջրամատակարարման և ջրահեռացման գործուն համակարգ.

3) տեղադրել շատրվան՝ ջրի շրջանառության ապահովման համար.

4) լճի և ափի կտրուկ անցումը վերացնելու և լճի այցելուների համար ավելի հասանելի դարձնելու նպատակով ստեղծել թեք ափ.

5) ստեղծել լողացող կղզիներ, որոնք վերամշակված, չսուզվող նյութերից պատրաստված լաստեր են, որոնք ծածկվում են բուսականությամբ.

6) ժամանցի կազմակերպման նպատակով նախատեսվում է տեղադրել ջրային ատրակցիոններ.

7) հնարավորության դեպքում լճում ստեղծել կղզի՝ տարբեր միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

8) լճում բարեկարգել կամուրջը կամ կառուցել շարժական կամուրջ:

Քաղաքային լճի բարեկարգման աշխատանքները	
Լճի չափսերի մեծացում	լճից ավելորդ ջրի հեռացման ապահովում
Լճի պատերի վերականգնում և ջրամեկուսացում	լճում շատրվանի տեղադրում
Լճի բնական ափերի ձևավորում	լճի մակերեսին լողացող կղզիներ
Երկաթբետոնե սալիկներով լճի հատակի բարեկարգում կամ փոխարինում	ջրային ատրակցիոնների (էլեկտրական մակույկ) կազմակերպում
Լճի ջրամատակարարման և ֆիլտրման համակարգի ձևավորում	կամրջի բարեկարգում կամ շարժական կամրջի ձևավորում
Ջրահավաքի կառուցում լճի և խողովակի միջև	տախտակամածի բարեկարգում
Ճանապարհի և մայթերի բարեկարգում բազալտի խճով սեղմված ծածկով, ասֆալտով, մայթի սալիկներով	
Քաղաքային լճի հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների, բացօթյա կահավորանքի, դեկորատիվ տարրերի տեղադրման և ինժեներական ապահովման ցանկ	

Կանաչապատ գոտի ոռոգման համակարգի ձևավորում	վրանի ներքո առևտրի տաղավարների տեղադրում
Նստարանների և աղբամանների տեղադրում	առկա երկաթբետոնե կոնստրուկցիաներով հավաքված ցանկապատի ապամոնտաժում
Ժամանակավոր մետաղյա ցանկապատի տեղադրում	ճեմուղիների և հեծանվային ուղիների ձևավորում և լուսավորություն
Ծառերի լուսավորության համակարգի ձևավորում	բացօթյա սեղանների տեղադրում
Կանաչապատ գոտում լուսարձակող կոճղ դեկորատիվ լուսամփոփների տեղադրում	անվտանգության ապահովում

7.6. Իրականացման գործընթացը

46. Քաղաքային լճի հարակից տարածքների բարեկարգման տևողությունը կկազմի 12 ամիս, իսկ քաղաքային լճի բարեկարգման նախագծի իրականացման տևողությունը 60 ամիս է, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել՝

Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգում

NN ը/կ	Միջոցառումը / փուլը	Պատասխանատուն	Ծանոթագրություն
1.	1-ով փուլ նախատեսված աշխատանքների իրականացում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում
2.	Տեխնիկատնտեսական հիմնավորում (Feasibility Study)	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	նվիրատվություն/օտարում
3.	Էսքիզային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	նվիրատվություն /օտարում
4.	Աշխատանքային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր	նվիրատվություն/օտարում

		իրականացնող անձինք	
5.	Շինարարական փուլ	ընտրված շինարարական ընկերություն և անմիջապես վերջինիս հետ ծրագրի շրջանակներում ծառայություն-ների մատուցման կամ աշխա-տանքների կատարման պայմանագիր կնքած անձինք	ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում

7.7. Անհրաժեշտ տարածքը

47. «ԴԻՍ Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամը ծրագրի իրականացման շրջանակներում ներդրում կամ նվիրաբերում է՝

1) Դիլիջանի Մ.Գորկու N 17/1 հասցեում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող «Քաղաքային լիճ» օբյեկտի և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը, մասնավորապես՝

ա. 1.6185 հեկտար չափով հատուկ պահպանվող հողեր նպատակային նշանակություն ունեցող հողամասը (քաղաքային լիճ),

բ. 337.1 քառ. մետր չափով հասարակական նշանակություն ունեցող սննդի օբյեկտը:

Համաձայն 2013 թ. հոկտեմբերի 30-ի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի օտարման պայմանագրի՝ Դիս Փրոփերթիս բարեգործական հիմնադրամը կառուցապատման իրավունքը ձեռք է բերել 42,857,500 դրամով.

2) Դիլիջանի Մ.Գորկու N 17/9 հասցեում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող 944 քառ. մետր մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքը, որը 2014 թվականի հոկտեմբերի 27-ին kառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերվել 13,573,547 դրամ.

3) Դիլիջանի Մ.Գորկու N 17 հասցեում գտնվող 1,793 քառ. մետր հողամասը և 143.4 քառ. մետր մակերեսով շինությունը, որը 2014 թ. նոյեմբերի 6-ին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերվել 62,525,000 դրամով: Հողամասում՝

ա. 918 քառ. մետր մակերեսը (ներառյալ 383 քառ. մետր մակերես կապիտալ կառուցապատման արգելքի սահմանափակումով) հանդիսանում է սեփականություն,

բ. 875 քառ. մետր մակերեսը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունք.

4) Դիլիջանի Մ.Գորկու N 15 հասցեում գտնվող սեփականության իրավունքով պատկանող 10,000 քառ. մետր հողամասը և 11,088.58 քառ. մետր մակերեսով շինությունը 2014 թ. փետրվարի 27-ին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերվել 375,715,000 դրամով.

5) Դիլիջանի Մ.Գորկու N 15/2 հասցեում գտնվող համայնքային սեփականության իրավունքով պատկանող 10,000 քառ. մետր հողամասի վարձակալության իրավունքը, որը համաձայն 2014 թ. փետրվարի 27-ին կնքված անշարժ գույքի վարձակալության իրավունքի զիջման պայմանագրի ձեռք է բերվել 66,000 դրամով.

6) Դիլիջանի Մ.Գորկու N 21 հասցեում գտնվող սեփականության իրավունքով պատկանող 2,500 քառ. մետր հողամասը, որը համաձայն 2014 թ. փետրվարի 27-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի ձեռք է բերվել 4,785,000 դրամով:

ԴԻՍ Փրոփերթիս բարեգործական հիմնադրամը, հանդիսանալով «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագիրն իրականացնող անձանցից, իր կանոնադրական նպատակներն իրականացնելու շրջանակներում, վերը նշված անշարժ գույքերը նվիրաբերում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին՝ քաղաքային լճի և հարակից տարածքի (ներառյալ քաղաքային զբոսայգու մի հատվածի) բարեկարգման համար, որի նպատակն է ձևավորել և զարգացնել քաղաքացիների, զբոսաշրջիկների, Դիլիջանի միջազգային դպրոցի ուսանողների և անձնակազմի հանգստի կազմակերպման համար բարենպաստ միջավայր.

7) Դիլիջանի Մ.Գորկու N 15/3 հասցեում գտնվող անհատույց օգտագործման իրավունքով Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին պատկանող 5000 քառ. մ հողամաս:

Քարտեզ՝ քաղաքային լիճը և հարակից տարածքները

7.8. Ակնկալվող արդյունքները

48. Քաղաքային լճի և հարակից տարածքների բարեկարգման արդյունքում ակնկալվում է ձևավորել հանգստի և ժամանցի կազմակերպման կարևորագույն ու արդի հանգույցներից մեկը, որը կստեղծի անհրաժեշտ միջավայր բնակիչների ու զբոսաշրջիկների՝ դեպի լճի և ներդրումային ծրագրով նախատեսված այլ տարածքների հոսքերի ապահովման համար:



8. Բաղադրիչ 3. Քաղաքային զբոսայգու վերակառուցումը

8.1.Ներկա վիճակը

49. Դիլիջանի քաղաքային զբոսայգին համարվել է քաղաքի հիմնական հանգստի և ժամանցի վայրը: Ժամանակի ընթացքում պատշաճ խնամքի բացակայության պատճառով զբոսայգու կառույցները և ատրակցիոնները շարքից դուրս են եկել:

50. Հին ատրակցիոնները դեռևս գործում են ամառային սեզոնին, սակայն կարուսելների մեծ մասն անմխիթար վիճակում են և անվտանգ չեն: Տարածքում առկա են լքված կառույցներ, որոնք ժամանակին սննդի և զովացուցիչ ըմպելիքների վաճառքի կետեր էին:

51. Չնայած զբոսայգու հարուստ բուսական տեսքին՝ զբոսայգու երևացող հիմնական թերություններից մեկը լանդշաֆտի անբավարար խնամքն է և զբոսայգու ճարտարապետական կառույցների անմխիթար վիճակը, որը պայմանավորված է զբոսայգու ոչ պատշաճ խնամքի կազմակերպմամբ և ենթակառուցվածքների մաշվածությամբ:

52. Զբոսայգու հարակից տարածքով ձգվում է Ծատուրյան փողոցը, որտեղ ավտոտրանսպորտի երթևեկը հազվադեպ է, քանի որ ճանապարհը վատ վիճակում է: Զբոսայգու ճեմուղիների ծածկույթը մասամբ կամ ամբողջովին քայքայված է: Գիշերվա ժամերին զբոսայգու օգտագործումն անհնար է, քանի որ բացակայում է անհրաժեշտ լուսավորությունը և անվտանգությունը:

Նկար. Զբոսայգու ներկայիս վիճակը

8.2. Քաղաքային զբոսայգու մի հատվածի բարեկարգման նպատակը և հակիրճ նկարագրությունը

53. Ստեղծել էսթետիկ, հարմարավետ, մաքուր և անվտանգ վայր՝ ընտանեկան հանգստի և համայնքային կյանքի կազմակերպման միջավայր՝ նպաստելով զբոսայգու այցելուների թվի աճին և այգուն հարակից տարածքում ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանը:

8.3. Մարտավարական խնդիրները

54. Մարտավարական խնդիրներն են՝

1) քաղաքային զբոսայգու լանդշաֆտի էսթետիկ գեղեցկության և զբոսայգուն բնորոշ ներկայանալի տեսքի ապահովում.

2) կենսաբազմազանության և էկոլոգիայի պահպանությունը.

3) համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների տարբեր տարիքային խմբերի համար հանգստի և ժամանցի անցկացման, ինչպես նաև անվտանգ ճեմուղիների և հեծանվային ուղիների ձևավորումը.

4) հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար մատչելի ենթակառուցվածքների ձևավորումը.

5) մանկական խաղահրապարակների կազմակերպումը.

6) հանգստի կազմակերպման համար նվազագույն պայմանների ապահովումը (նստարաններ, աղբամաններ, լուսավորություն, անվտանգություն և այլն).

7) բացօթյա միջոցառումների կազմակերպման միջավայրի ստեղծումը:

8.4. Մանրամասն նկարագիրը

55. Սույն բաղադրիչի իրականացումն ուղղված է քաղաքային զբոսայգու մի հատվածի՝ որպես հանրային և հանգստի գոտու վերականգնմանը: Տարածքը գտնվում է Դիլիջանի մարզահամալիրի հարևանությամբ և կազմում է առնվազն 64,000 քառ. մետր, որից 35,000 քառ.մետրն անհրաժեշտ է վարձակալել համայնքապետարանից:



8.5. Նախատեսվող գործողությունները

56. Կարևորելով քաղաքային զբոսայգու ակտիվացման խնդիրը՝ բաղադրիչի իրականացման շրջանակներում նախատեսվում է առնվազն կազմակերպել հետևյալ միջոցառումները՝

1) փուլ 1

ա. ծառերի գույքագրում, սանիտարական հատումներ, լանդշաֆտին համահունչ բուսատեսակների և ծառերի տնկում և այլն,

բ. ճեմուղիների և հեծանվային ուղիների վերականգնում կամ ձևավորում,

գ. նստարանների և աղբամանների տեղադրում,

դ. լուսավորության և անվտանգության համակարգերի արդիականացում,

ե. երեխաների համար խաղահրապարակների բարեկարգում և ձևավորում.

2) փուլ 2

ա. ոռոգման համակարգի ձևավորում,

բ. մանրածախ առևտուր կազմակերպելու նպատակով տաղավարների ձևավորում,

գ. երեխաների համար խաղահրապարակների և ատրակցիոնների, ինչպես նաև բացօթյա միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորում,

դ. սպորտային ենթակառուցվածքների զարգացում,

ե. հանրային զուգարանի կառուցում,

զ. տեղեկատվական ցուցանակների տեղադրում:

57. Զբոսայգու տարածքի նախագծումը և բարեկարգումն իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց համար ենթակառուցվածքների մատչելիության ապահովման սկզբունքով:



Քաղաքային զբոսայգու հատվածի բարեկարգման աշխատանքների, բացօթյա կահավորանքի, դեկորատիվ տարրերի տեղադրման և ինժեներական ապահովման ցանկը	
Ճանապարհի և մայթերի բարեկարգում բազալտի խճով սեղմված ծածկով, ասֆալտով, մայթի սալիկներով	լուսավորության և անվտանգության ապահովում
Կանաչապատ գոտու ոռոգման համակարգի ձևավորում	բացօթյա միջոցառումների կազմակերպման հարթակի ստեղծում
Առկա տաղավարների փոխարինում նորերով	բացօթյա սեղանների, նստարանների և աղբամանների տեղադրում
Ճեմուղիների և հեծանվային ուղիների ձևավորում և լուսավորություն	հասարակական զուգարան
Ծառերի լուսավորություն	կարծիքների և առաջարկությունների արկղի տեղադրում
Կանաչապատ գոտում լուսարձակող կոճղ դեկորատիվ լուսամփոփների տեղադրում	WiFi ծառ
Հեծանիվների կայանատեղի կառուցում	երեխաների խաղահրապարակ և ատրակցիոնների ստեղծում

58. Բաղադրիչի իրականացման ընթացքում հաշվի է առնվելու հետագայում քաղաքային զբոսայգու բարեկարգման համար անհրաժեշտ և բավարար ենթակառուցվածքների ձևավորումը:

8.6. Իրականացման գործընթացը

59. Բաղադրիչի իրականացման շրջանակներում 1-ին փուլի տևողությունը՝ 12 ամիս իսկ 2-րդ փուլը 60 ամիս է, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել՝

NN ը/կ	Միջոցառումը/ փուլը	Պատասխանատուն	Ծանոթագրություն
1.	Բարեկարգման աշխատանքների իրականացում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում
2	Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	նվիրատվություն/օտարում
3	Էսքիզային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	նվիրատվություն /օտարում
4	Աշխատանքային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	նվիրատվություն /օտարում
5	Շինարարական փուլ	ընտրված շինարարական ընկերություն և անմիջապես վերջինիս հետ ծրագրի շրջանակներում ծառայու-թյունների մատուցման կամ աշխատանքների կատարման պայմանագիր կնքած անձինք	ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում

8.7. Անհրաժեշտ տարածքը

60. Բաղադրիչի իրականացման համար անհրաժեշտ տարածք՝

1) Դիլիջանի Գետափնյա աջ 1 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող 1,303.3 քառ. մետր հողամաս (զբոսայգի), որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

2) Դիլիջանի Գետափնյա աջ 1/1 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող 698. 8 քառ. մետր հողամաս (զբոսայգի), որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

3) Դիլիջանի Գետափնյա աջ 3 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող 2,655 քառ. մետր հողամաս (զբոսայգի), որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

4) Դիլիջանի Գետափնյա աջ 5 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող 11,920 քառ. մետր հողամաս (զբոսայգի), որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

5) Դիլիջանի Գետափնյա 19/4 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող 4,572.1 քառ. մետր հողամաս, որը պատկանում է «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ին կառուցապատման իրավունքով և կարող է նվիրաբերել Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

6) Դիլիջանի Գետափնյա 19/1 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Դիլիջանի քաղաքային զբոսայգու 8,140.0 քառ. մետր հողամաս, որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամին.

7) Դիլիջանի Գետափնյա 19/1 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Դիլիջանի քաղաքային զբոսայգու 2,067.3 քառ. մետր հողամաս, որի նկատմամբ կառուցապատման իրավունքը պատկանում է «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ին.

8) Դիլիջանի Գետափնյա հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Դիլիջանի քաղաքային զբոսայգու առնվազն 35,000 քառ. մետր հողամաս, որն անհրաժեշտ է ձեռք բերել կառուցապատման իրավունքով:

9) Դիլիջանի քաղաքային զբոսայգու հարակից տարածքներ, որը կնպաստի ծրագիր արդյունավետ իրականացմանը:

8.8. Ակնկալվող արդյունքները

61. Բարեկարգման արդյունքում ակնկալվում է ունենալ բնական միջավայրին առավելագույնս մոտ, էսթետիկ, հարմարավետ, մաքուր և անվտանգ քաղաքային

զբոսայգի ընտանեկան հանգստի համար: Զբոսայգին հնարավորություն կտա անցկացնել ընտանեկան հանգիստը, հեծանիվ վարել, մարզվել կամ վազել, զբոսնել ընտանի կենդանիների հետ, կազմակերպել բացօթյա համերգներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ:

9. Բաղադրիչ 4. Քաղաքային մարզադաշտի վերակառուցումը

9.1.Ներկա վիճակը

62. Դիլիջանի քաղաքային մարզադաշտը ներկայումս չի գործում, քանի որ բացակայում են ինժեներական համակարգերը և ենթակառուցվածքները: Մարզադաշտի ոռոգման համակարգի բացակայության պատճառով խոտածածկ մասը պիտանի չէ ֆուտբոլային մրցումների կազմակերպման համար, ավելին՝ խոտածածկ մասի հարակից տարածքում գտնվող վազքուղիները և թեթև ատլետիկայի հարթակն ասֆալտապատ են և պիտանի չեն օգտագործման: Մարզադաշտը չունի էլեկտրոնային ցուցանակ:

63. Մարզադաշտում հանդիսատեսի համար նախկինում տեղադրված են եղել 1,940 հոգու համար նախատեսված նստատեղեր, որոնք քանդվել են և ենթակա չեն վերականգնման: Մարզադաշտում մարզչական կազմի և պահեստային խաղացողների համար նախատեսված հարթակը և նստարանները ենթակա են հիմնովին վերանորոգման:

64. Մարզադաշտի հանդերձարանը մասամբ վերանորոգված է, սակայն դրա շահագործման համար անհրաժեշտ գույքը բացակայում է, սանհանգույցները և լոգասենյակներն օգտագործման պիտանի չեն:

65. Մարզադաշտի ցանկապատը քանդվել է և հիմնավերանորոգման կամ ամբողջովին փոխարինելու կարիք ունի:

Մարզադաշտի ներկայիս վիճակը

9.2. Մարզադաշտի բարեկարգման նպատակը և հակիրճ նկարագրությունը

66. Կառուցել բարեկարգված քաղաքային մարզադաշտ, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել քաղաքային և տարածաշրջանային մակարդակի մարզական մրցումներ և այլ միջոցառումներ:

67. Խթանել համայնքային կյանքը և նպաստել ատլետիկ և թիմային մարզաձևերի զարգացմանը Դիլիջանում:

9.3. Մարտավարական խնդիրները

68. Մարտավարական խնդիրներն են՝

1) ոռոգման և ջրահեռացման համակարգի ուսումնասիրությունը և ձևավորումը.
2) լուսավորության համակարգի ձևավորումը.
3) մարզադաշտի խոտածածկի տեղադիրքի փոփոխում և արդիականացումը.
4) հանդիսատեսի համար նստատեղերի ապահովումը.
5) մարզչական կազմի և պահեստային խաղացողների համար նստատեղերի ստեղծումը.

6) խաղի հաշիվը ցուցադրելու ցուցանակի փոխարինումը.
7) ցանկապատի բարեկարգումը.
8) մարզադաշտի հանդերձարանների վերանորոգումը.
9) վազքուղու, թեթև ատլետիկայի հարթակի ստեղծումը և հնարավորության դեպքում մարզասարքերի տեղադրումը:

9.4. Մանրամասն նկարագիրը

69. Սույն բաղադրիչի իրականացումն ուղղված է մարզադաշտի վերականգնմանը: Տարածքը գտնվում է Դիլիջան քաղաքային զբոսայգու հարևանությամբ և կազմում է 19,440 քառ. մետր:

9.5. Նախատեսվող գործողությունները

70. Կարևորելով քաղաքային մարզադաշտի ակտիվացման խնդիրը՝ բաղադրիչի իրականացման շրջանակներում նախատեսվում է առնվազն կազմակերպել հետևյալ միջոցառումները՝

1) փուլ 1

ա. ֆուտբոլային դաշտի վերակառուցում,

բ. ֆուտբոլային դաշտի չորս անկյուններում լուսարձակների տեղադրում, որոնք թույլ կտան ապահովել ՈՒԵՖԱ-ի ստանդարտներին համապատասխանող լուսավորություն,

գ. ուսումնասիրություն մարզադաշտի խոտածածկը ջրելու համար պահանջվող ջրի ծավալների հաշվարկման և ջրի աղբյուրի որոշման մասին, առկա ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը գնահատելու նպատակով, որի արդյունքում կորոշվեն մարզադաշտի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերականգնման ծավալները և անհրաժեշտ հզորությունները,

դ. ոռոգման և ջրահեռացման համակարգի ձևավորում,

ե. մարզադաշտի հյուսիսային թևում նստատեղերի տեղադրում՝ առնվազն 300 հանդիսատեսի համար,

զ. նախատեսվում է վերականգնել ցանկապատի վնասված հատվածները,

է. մարզադաշտի հանդերձարանների վերանորոգում,

ը. սպրինտի վազքուղու ձևավորում՝ նստատեղերի երկայնքով.

2) փուլ 2

ա. մարզադաշտի հյուսիսային թևում նստատեղերի ավելացում՝ մինչև 1,500 հանդիսատեսի համար,

բ. ցանկապատի ապամոնտաժում և գետի ափի երկայնքով թափանցիկ ցանկապատի տեղադրում, որը վիզուալ միավորում է մարզադաշտը և վազքուղիներն ու հեծանվաուղիները,

գ. դեպի դաշտ տանող ստորգետնյա անցման ձևափոխում,

դ. նախատեսվում է ստեղծել վազքուղի ֆուտբոլի դաշտի շուրջը՝ ներառյալ թեթև աթլետիկայի հարթակ: Մարզադաշտի արևմտյան մասում հնարավոր է տեղադրել մարզասարքեր և ստեղծել հարթակներ:

Քաղաքային մարզադաշտի բարեկարգման աշխատանքների, բացօթյա կահավորանքի, դեկորատիվ տարրերի տեղադրման և ինժեներական ապահովման ցանկը	
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կատարելագործում	տրիբունայի կառուցում, մարզիչների և պահեստային խաղացողների նստատեղերի բարեկարգում
Մարզադաշտի խոտածածկի տեղադիրքի փոփոխություն և բարելավում	խաղի հաշվի ցուցանակի բարեկարգում
Լուսավորության և անվտանգության համակարգի ստեղծում	աղբամանների տեղադրում
Վազքուղիների և մարզական հարթակների բարելավում	մարզասարքերի հարթակների ստեղծում
Հանդերձարանի բարեկարգում	ցանկապատի բարեկարգում

71. Բաղադրիչի իրականացման ընթացքում հաշվի է առնվելու հետագայում քաղաքային մարզադաշտի՝ ՈՒԵՖԱ-ի ստանդարտներին համապատասխան բարեկարգման անհրաժեշտ և բավարար ենթակառուցվածքների ձևավորումը:

9.6. Իրականացման գործընթացը

72. Բաղադրիչի իրականացման 1-ին փուլի տևողությունը 12 ամիս է, 2-րդ փուլը՝ 60 ամիս, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել՝

NN ը/կ	Միջոցառումը / փուլը	Պատասխանատուն	Ծանոթագրություն
	Փուլ 1		ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում
1.	Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA	նվիրատվություն/օտարում

		բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	
2.	Էսքիզային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	նվիրատվություն /օտարում
3.	Աշխատանքային նախագծի մշակում	կազմակերպում և (կամ) իրականացնում է IDeA բարեգործական հիմնադրամը և (կամ) ծրագիր իրականացնող անձինք, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	նվիրատվություն /օտարում
4.	Շինարարական փուլ	ընտրված շինարարական ընկերություն և անմիջապես վերջինիս հետ ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման պայմանագիր կնքած անձինք, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	ծրագիր իրականացնող անձանց, դոնորների և այլ կառույցների ֆինանսավորում

9.7. Անհրաժեշտ տարածքը

73. Դիլիջանի Գետափնյա 19 հասցեում գտնվող Դիլիջանի համայնքի սեփականությունն հանդիսացող 19,440 քառ. մետր ընդհանուր մակերեսով մարզադաշտը և վերջինիս սպասարկման տարածքը և այդ տարածքում գտնվող շինությունները (մարզադաշտ, տրիբունա (քանդված վիճակ), հանդերձարանի երկհարկանի շենք, ասֆալտապատ վազքուղիներ, պարիսպ), որը վարձակալության իրավունքով պատկանում է «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ին:

9.8. Ակնկալվող արդյունքները

74. Վերանորոգման արդյունքում քաղաքը կունենա բարեկարգ մարզադաշտ, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել սպորտային տարբեր միջոցառումներ, ատլետի-

կայի և թիմային խաղերի մրցումներ: Բարեկարգ հանդերձարանների առկայությունը թույլ կտա անցկացնել միջհամայնքային միջոցառումներ: Միջոցառումների անցկացման արդյունքում կաշխուժանա համայնքի սպորտային կյանքը, ինչպես նաև Դիլիջանի համայնքում ներառված բնակավայրերի և այլ հաստատությունների միջև կապերը:

10. Ծրագրի հիմնական ռիսկերը և դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները

75. Ծրագրի իրականացման գործընթացում առկա ռիսկերը ներկայացված են ստորև՝

Ռիսկի աղբյուրը	Ռիսկի նկարագրությունը	Ռիսկի նվազեցմանը կամ կանխարգելմանն ուղղված միջոցառումները
Սոցիալ-տնտեսական վիճակի վատացում	Տնտեսական ճգնաժամերով, բնակչության գնողունակության անկմամբ պայմանավորված՝ դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի կրճատում, որի արդյունքում կնվազեն նաև դեպի Դիլիջան և տարածաշրջան հոսքերը:	Զբոսաշրջության ոլորտը ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրի գերակա ճյուղ է: Առկա ներուժի օգտագործման վրա հիմնված՝ ներգնա տուրիզմի խթանման միջոցով հնարավոր է չեզոքացնել օտարերկրյա զբոսաշրջիկների պակասը: Համահայկական նշանակության փառատոների կազմակերպում, միջազգային տարբեր հարթակներում Դիլիջանի առաջ մղման միջոցառումներ:
Ճգնաժամային իրավիճակներում ներդրումային ակտիվության նվազում	Համաշխարհային մասշտաբով տեղի ունեցող ճգնաժամային երևույթներն իրենց ազդեցությունը կունենան դեպի տարածաշրջան ուղղվող ներդրումների հոսքերի նվազեցման վրա:	Համագործակցություն տարածաշրջանում ՀՀ կառավարության ծրագրերի շրջանակում ներգավված՝ մասնակից կառույցների, այդ թվում՝ միջազգային ֆինանսական կառույցների հետ՝ ծրագրերի համատեղման, փոխլրացման, առավելագույն արդյունքներ ապահովելու համար: Ակտիվ մասնակցություն միջազգային կառույցների կողմից հայտարարված ծրագրերին, այդ թվում՝ դրամաշնորհային: Հիմնադրամի հիմնադիրների կողմից ծրագրի իրագործման մեկնարկի համար նախատեսված բյուջեն արդեն իսկ հատկացված է (ռիսկի նվազեցում): Համագործակցություն պոտենցիալ դոնորների հետ:
Արտագաղթ	Հանրապետությունից բնակչության արտագաղթի պատճառով որոշակիորեն կնվազեն հնարավոր զբոսաշրջային հոսքերը, իսկ տարածաշրջանից արտագաղթի	Ծրագրի իրականացման հիմնական նպատակներից է նոր աշխատատեղերի ստեղծումը, որը կնվազեցնի կամ կբացառի արտագաղթի հնարավոր ռիսկը: Ավելին՝ Ծրագրի իրականացման արդյունքում

	հետևանքով կնվազի կառուցվող ենթակառուցվածքների նկատմամբ համընդհանուր պահանջարկը:	ակնկալվում է բնակչության (այդ թվում՝ նոր բնակիչների հաշվին) թվի աճ:
Ծրագրերին հանրության կողմից մասնակցության ոչ բավարար մակարդակ	Հանրության մի մասի դիմադրություն, բացասական վերաբերմունք:	Հանրության շրջանում իրականացվել են լայնածավալ բացատրական աշխատանքներ, ներկայացվել են նախագծի իրագործման արդյունքում ակնկալվող սոցիալ-տնտեսական օգուտները: Բնակչության, հատկապես երիտասարդների ներգրավում ծրագրի առանձին միջոցառումներում, աշխատանքներում:
ՀՀ կառավարության կողմից ներդրումային ծրագրի հաստատման ուշացում	Շինարարական աշխատանքների սկզբի հետաձգում, շինարարության սեզոնային գործոններով պայմանավորված՝ գրաֆիկի տեղափոխում, ծրագրի արժեքի թանկացում և այլն	Ծրագրի իրականացման շրջանակներում թիրախավորվել են ՀՀ կառավարության կողմից գերակա ճյուղ հայտարարված՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը, շրջակա միջավայրի պահպանությունը, բնակարանա-շինություն զարգացման ոլորտները:
Անհրաժեշտ որակավորման աշխատուժի հավաքագրում Դիլիջանի համայնքից	Ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում անհրաժեշտ աշխատողների բացակայություն Դիլիջանի համայնքում:	Դիլիջանի համայնքից արդեն իսկ առկա է անհրաժեշտ աշխատուժ, ինչը պայմանավորված է վերջին տարիներին Դիլիջանում իրականացված խոշորամասշտաբ շինարարական գործընթացներով: Ծրագրի շահագործման համար անհրաժեշտ որակի աշխատուժի բացակայության դեպքում կկազմա-կերպվեն համապատասխան վերապատրաստման դասընթացներ:
ՀՀ օրենսդրության կատարելագործում	Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան նոր բուժման մեթոդների և իրավական դաշտի կատարելագործում:	Լինել նախաձեռնող և (կամ) մասնակից՝ համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը
Արտասահմանից բժշկական անձնակազմ ունենալու նախադեպի բացակայություն	Հայաստանում բուժող բժիշկների լիցենզիաները տրամադրվում են միայն արտերկրից հայ բժիշկներին: Հայաստանում օտարերկրյա բժիշկների աշխատանքի մասին	Լինել նախաձեռնող և (կամ) մասնակից՝ համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը

	տեղեկատվություն չկա:	
Ֆինանսավորման բարդությունը	Չաում Դիլիջան կենտրոնը թիրախում է վերին միջին խավի հաճախորդներին, ինչը դժվարացնում է սոցիալական նախագծերում հետաքրքրված դոնորների և ներդրողների ներգրավումն այս ծրագրում:	Կոնցեպտի մանրամասն նախագծում՝ հաշվի առնելով սոցիալական ազդեցության կոմպոնենտը:

11. Ծրագրի սոցիալ-տնտեսական նշանակությունը և ազդեցությունը տարածքի զարգացման վրա

76. Ներդրումային ծրագրի իրականացման և դրա արդյունքում ձևավորված ենթակառուցվածքների շահագործումը տարածաշրջանի համար կունենա հետևյալ ազդեցությունը՝

1) ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներդնել առնվազն 15.682 մլրդ դրամ, իսկ ընդհանուր ծրագրի արժեքը կկազմի առնվազն 17.0 մլրդ դրամ (ներառյալ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի՝ շենքերի, շինությունների, հողատարածքների ձեռքբերման համար վճարված արժեքը): Հարկ է նշել, որ ծրագիր իրականացնող անձանց կողմից կառուցապատման իրավունքով պատկանող հողամասերի համար կատարում են անհրաժեշտ վճարումներ.

2) ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի մոտ 1070 աշխատատեղ: Նախագծի իրականացման ընթացքում ստեղծվող աշխատատեղերի միջին ամսական աշխատավարձը կկազմի առնվազն 200 հազ. դրամ: Հարկ է նշել, որ համաձայն պաշտոնական վիճակագրության 2017 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ Տավուշի մարզում միջին ամսական աշխատավարձը կազմել է 159,143 դրամ[1].

3) համաձայն ներկա կանխատեսումների և հաշվարկների՝ ծրագրի իրակա-նացման ընթացքում նոր ստեղծվող աշխատատեղերի արդյունքում ՀՀ պետական բյուջե լրացուցիչ կվճարվի առնվազն 300 մլն դրամի եկամտային հարկ.

4) ծրագրի իրականացման արդյունքում շահագործման հանձնվող օբյեկտներում կստեղծվի առնվազն 408 մշտական աշխատատեղ: Միջին ամսական աշխատավարձն այս խմբի աշխատատեղերի համար կկազմի 500,000 դրամ, իսկ ՀՀ պետական բյուջե կվճարվի առնվազն 330 մլն դրամ եկամտային հարկ.

[1] Տե՛ս Ազգային վիճակագրական ծառայության կայքը՝ http://www.armstat.am/file/article/sv_11_17a_142_.pdf

5) ներդրումային գրավչության բարձրացում՝ այլ ներդրողների համար տարածաշրջանում ներդրումների իրականացման բարենպաստ միջավայր.

6) զբոսաշրջային ենթակառուցվածքների կատարելագործում և տուրիստական հոսքերի ավելացում.

7) ՓՄՁ-ի ոլորտի զարգացում՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ծավալի հավելյալ աճ, սպառման ծավալների մեծացում.

8) տարածաշրջանում գործազրկության մակարդակի նվազում և աղքատության մակարդակի կրճատում.

9) համայնքից աշխատուժի արտահոսքի մակարդակի կրճատում.

10) քաղաքաշինության բնագավառում առաջադեմ տեխնոլոգիաների, կառուցապատման կանոնների և չափանիշերի ներդրում:

12. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	Չափանիշը	<<Չաում Դիլիջան>> կենտրոնի հիմնումը	Քաղաքային լճի և հարակից տարածքի բարեկարգումը	Քաղաքային զբոսայգում մի հատվածի բարեկարգումը	Մարզադաշտի վերանորոգումը	Ներդրումային ծրագիրը
		(բաղադրիչ 1)	(բաղադրիչ 2)	(բաղադրիչ 3)	(բաղադրիչ 4)	
1	Բաղադրիչի իրականացման ժամկետ, ամիս	60	60	60	60	60
2	Բաղադրիչի բյուջեն, հազ դրամ (առնվազն)	14,550,000	672,000	145,500	315,250	15,682,750
3	Մինչև ներդրումային ծրագրի իրականացումը գույքի սեփականության, վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունք ունենցող անձ (տրամադրող կողմ)	IDeA հիմնադրամ և (կամ) ծրագիր իրականացնող անձինք	ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ բարեգործական հիմնադրամ	«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ Դիլիջանի համայնքապետարան	«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ	
4	Գույքի մակերես, հա (առնվազն)	5.9	4.6	9.9	1.9	22.3
5	Նախկինում գույքի ձեռքբերման արժեքը, մլն դրամ	838	499.522	-	-	1,137.5
6	Ներդրումային ծրագրի ընթացքում գույքի սեփականության, վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունք ունեցող անձ	«Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ կամ ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	
7	Շինարարության պատվիրատու	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	ներդրումային ծրագիր իրականացնող անձ	
8	Ֆինանսավորող կողմ	ներդրումային ծրագիր իրականացնող անձինք Դոնորներ և այլ կառույցներ	ներդրումային ծրագիր իրականացնող անձինք, դոնորներ և այլ կառույցներ	ներդրումային ծրագիր իրականացնող անձինք, դոնորներ և այլ կառույցներ	ներդրումային ծրագիր իրականացնող անձինք, դոնորներ և այլ կառույցներ	
9	Նախագծող	«Թի էֆ ԱՐՔԻԹԵՔԹՍ» ՍՊԸ և (կամ) մրցույթում խախտող ճանաչված	«Թի էֆ ԱՐՔԻԹԵՔԹՍ»ՍՊԸ և (կամ) մրցույթում խախտող ճանաչված	«Թի էֆ ԱՐՔԻԹԵՔԹՍ»ՍՊԸ և (կամ) մրցույթում խախտող ճանաչված	«Թի էֆ ԱՐՔԻԹԵՔԹՍ»ՍՊԸ և (կամ) մրցույթում խախտող	

		կազմակերպություններ	կազմակերպություններ	կազմակերպություններ	ճանաչված կազմակերպություններ	
10	Կապալառու	Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ ՓԲԸ մրցույթով ընտրված շինարարական կազմակերպություն	Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ ՓԲԸ մրցույթով ընտրված շինարարական կազմակերպություն	Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ ՓԲԸ մրցույթով ընտրված շինարարական կազմակերպություն	Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ ՓԲԸ մրցույթով ընտրված շինարարական կազմակերպություն	
11	Շինարարության ընթացքում ստեղծվող աշխատատեղերի քանակը	1,000	20	15	35	1,070
12	Ամսական միջին աշխատավարձ (հազ. դրամ)	250	200	200	200	
13	Շահագործման ընթացքում ստեղծվող աշխատատեղերի քանակը	380	16	6	6	408
14	Ամսական միջին աշխատավարձ (հազ. դրամ)	500	196	196	196	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ